ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 17.08.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/81 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 17.08.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 14.05.2018թ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, Պատվիրատու) կողմից հրապարակվել էր «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» պաշտպանիչ միջոցների ձեռքբերման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 13-րդ չափաբաժնին մասնակցելու հայտ են ներկայացրել «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն և «ՏԵՔՍՈՒՐԼԴ» ՍՊԸ-ն:

Ս/թ օգոստոսի 10-ին թիվ 3.4 որոշմամբ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Տեքսուրլդ» ՍՊԸ-ին ճանաչել է թիվ 13 չափաբաժնի մասով ընտրված մասնակից:

«ՏԵՔՍՈՒՐԼԴ» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված նմանատիպ պայմանագիր է ներկայացրել կոշիկների մատակարարման պայմանագրեր, որը չի կարող համարվել նմանատիպ տվյալ ընթացակարգի թիվ 13-րդ չափաբաժնի համար (հաշվի առնելով, որ նմանատիպը, ըստ CPV կոդերի, պետք է լիներ 181, այլ ոչ 180 եռանիշ թիվը):

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 65-րդ կետի՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Ընկերությունը գտնում է, որ սույն թվականի օգոստոսի 10-ին թիվ 3.4 որոշմամբ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը հակասում է նաև ՀՀ «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին:

Ընկերությունը գտնում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված որոշումը մասնակիցների համար ստեղծում է անհավասար պայմաններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռք բերվող պաշտպանիչ միջոցները անմիջական կապ ունեն մարդու առողջության համար անվտանգ աշխատանքային գործունեության ապահովման համար, Ընկերությունը խնդրել է կասեցնել, քննել և մերժել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնահատող հանձնաժողովի ս/թ օգոստոսի 10-ին թիվ 3.4 արձանագրությամբ թիվ 13 չափաբաժնի վերաբերյալ կայացրած որոշումը:

Ի լրումն բողոքի Ընկերությունը 23.08.2018թ. գրությամբ հայտնել է, որ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: .... Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N390-Ն որոշման հավելված 4-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ մակարդակը՝ դասը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000):

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվիրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ընկերությունը հայտնել է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված պահանջի լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը հետևում է, որ մասնակիցը, որպեսզի բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, որի մեջ ներառված է նաև «Մասնագիտական փորձառություն» չափանիշը, անհրաժեշտ է որպեսզի վերջինս հայտով ներկայացնի հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Ընդ որում գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մասնագիտական հագուստի, վերնահագուստի, հատուկ արտահագուստի և վերնահագուստի և պարագաների, անձնական խնամքի պարագաների, կոշկեղենի, անհատական և օժանդակ սարքերի մատակարարված լինելը:

Նույն հրավերի 13-րդ չափաբաժինը նշված է որպես «կոմբինեզոն հատուկ» և բնութագրում հստակ նշված է որ, նշված կոմբինեզոնը պետք է բավարարի հետևյալ բնութագրին - «100% բարձր խտության պոլիէթիլենից ПЭВП (полиэтилена высокой

плотности) HDPE, գլխարկի հետ մեկ ամբողջական կտորի, դիմացից կայծակաճարմանդով կոճկվող, վրայից կարված պաշտպանիչ կտորով, բոլոր կարերը ջրամեկուսիչ վրադիրներով, գոտկատեղում ռետինե ժապավենով, քիմիական լուծույթների նկատմամբ կայուն (ալկալի, թթու), ռադիոակտիվ մասնիկներից և պինդ աէրոզոլներից բարձր պաշտպանություն, գույնը՝ սպիտակ, փաթեթավորումը 1 հատով՝ քաշը 240-270 գրամ: L, XL, EN14126 կամ համարժեքը»:

Վերոգրյալից ակնհայտ է որ, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը որպես նախկինում կատարված պայմանագրի հիմնավորում համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 65-րդ կետի համապատասխան պետք է ներկայացներ պայմանագիր կամ պայմանագրեր, որոնք գտնվում են CPV 181 խմբում (հրավերով նույնպես սահմանված է հատուկ արտահագուստ, որն ընդգրկված է 181 խմբում):

Համաձայն ՀՀ կառավարության Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն առաջին տեղ է զբաղեցրել 13-րդ չափաբաժնի համար և որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՀՀ Կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստթղթերը: «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն որպես մասնագիտական փորձառության հիմնավորում ներկայացրել է ՀՀ ոստիկանության զորքերի հետ 28.04.2017թ. կնքված ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/Բ/2/ԻԾ/25 պայմանագիրը (27911520 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով): ՀՀ ոստիկանության զորքերի ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/Բ/2/ԻԾ/25 գնման ընթացակարգով որպես նմանատիպ սահմանված է եղել

– ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ մատակարարումը: Ինչը ևս փաստում է, որ մասնակիցը չունի նմանատիպ CPV 181 ապրանքների մատակարարման փորձառություն:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԱՔԴ/2539/02/17 քաղաքացիական գործով կայացրել է վճիռ, որում նշել է՝ Ինչ վերաբերում է պատասխանող կողմի առարկության այն պատճառաբանությանը, որ ներկայացված պայմանագիրը չի կարող գնահատվել որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր, քանի որ նշված պայմանագրով սահմանված ապրանքները հանդիսանում են հրավերով պահանջվող անկողնային պարագաների և սպիտակեղենի հումք, այլ ոչ թե մատակարարված նմանատիպ ապրանքներ, ապա Դատարանը գտնում է, որ այն անհիմն է, նկատի ունենալով, որ տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ նախկինում կատարված պայմանագրերը համանման (նմանատիպ) համարելիս, դրանք պետք է գնահատել և մեկնաբանել տնտեսական գործունեության նույն խմբերում դասվելու բավարարության տեսանկյունից, քանի որ վերոշարադրյալ իրավակարգավորումները չեն նախատեսում ամբողջությամբ նույնական պայմանագրերի առկայություն: Բացի այդ, պատասխանող կողմի նման գնահատման և մեկնաբանման պայմաններում բացակայում է շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկի համապատասխան գնման առարկայի անվանումը, ինչից ևս հետևում է, որ տնտեսական գործունեության նույն խմբերում դասվելու համար չի պահանջվում ամբողջությամբ նույնական պայմանագրերի առկայություն: Այս կապակցությամբ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ նախկինում կատարված պայմանագիրը նմանատիպ գնահատելու հակառակ մոտեցման պայմաններում հնարավոր մասնակիցների համար չի ապահովվի մրցակցության հավասար պայմանները, կհանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, այն չի լինի օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը:

Ընկերությունը գտնում է, որ «ՏԵՔՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը չեն համարվում համանման/նմանատիպ/, քանի որ դրա շրջանակում Ընկերության կողմից մատակարարված ապրանքները գտնվում են CPV այլ խմբերում:

«ՏԵՔՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերը կիրառելի են հրավերով հրապարակված այլ չափաբաժինների համար, բայց ոչ N 13 չափաբաժնի համար:

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ գլխի 1-ին կետի «ա2» պարբերությամբ սահմանվել է, որ թիվ 9, 11, 13, 14, 15, 16, 17, 19, 26, 27, 28 չափաբաժինների համար նմանատիպ են համարվում մասնագիտական հագուստի, վերնահագուստի, հատուկ արտահագուստի և վերնահագուստի և պարագաների, անձնական խնամքի պարագաների, կոշկեղենի, անհատական և օժանդակ սարքերի մատակարարված լինելը:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն առաջին տեղ է զբաղեցրել 13 չափաբաժնի համար և որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ՀՀ Կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը: «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն որպես մասնագիտական փորձառնության հիմնավորում ներկայացրել է ՀՀ ոստիկանության զորքերի հետ 28.04.2017թ. կնքված ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/Բ/2/ԻԾ/25 պայմանագիրը (27 911 520 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով) և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ 27.08.2015թ. կնքված թիվ ՀԻՕ-ՊՀ 393/15 պայմանագիրը (27 911 520 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով):

ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/Բ/2/ԻԾ/25 պայմանագրով «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն մատակարարել է Կոստյում (գտնվում է ԳՄԱ 18200000 խմբում) և թիկնոց (գտնվում է CPV

18200000 խմբում), իսկ ՀԻՕ-ՊՀ 393/15 պայմանագրով մատակարարվել է հատուկ կոշիկներ (ԳՄԱ 18800000 խմբում): Բողոքարկվող թիվ 13 չափաբաժնի ԳՄԱ կոդը գտնվում է 18200000 խմբում, ՀՀ Կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 65-րդ կետի (գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի) համաձայն՝ ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/Բ/2/ԻԾ/25 պայմանագիրը կարող է հանդիսանալ թիվ 13 չափաբաժնի համար նմանատիպ:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ ենթակետով թիվ 3.4 արձանագրությամբ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից 13-րդ չափաբաժնի համար:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 13-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել «Կոմբինիզոն հատուկ» ապրանքը, որը նույն հրավերի համաձայն նախատեսվել է «18231400» միջանցիկ ծածկագրի տակ:

3. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մասնագիտական հագուստի, վերնահագուստի, հատուկ արտահագուստի և վերնահագուստի և պարագաների, անձնական խնամքի պարագաների, կոշկեղենի, անհատական և օժանդակ սարքերի մատակարարված լինելը:

4. Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ պայմանագրեր ներկայացրել են «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 28.04.2017թ. կնքված հանդերձանքի մատակարարման պայմանագիրը և «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև 27.08.2015թ. կնքված կոշիկի մատակարարման ՀԻՕ-ՊՀ 393/15 պայմանագիրը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3.4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի 17.08.2018թ. բողոքը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի համապատասխան գրությունը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու

իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 13-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել «Կոմբինիզոն հատուկ» ապրանքը, որը նույն հրավերի համաձայն նախատեսվել է «**182**31400» միջանցիկ ծածկագրի տակ: Միևնույն ժամանակ www.gnumner.am կայքէջում հրապարակված «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մեջ «Կոմբինիզոն հատուկ» ապրանքը ըստ CPV դասակարգման նույնպես նախատեսվել է «**182**31400» միջանցիկ ծածկագրի տակ:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերով «Կոմբինիզոն հատուկ» ապրանքը նախատեսվել է գնումների միասնական անվանացանկի «**182**00000» թվային ծածկագրով խմբի

(«վերնահագուստ») մեջ, որն իր հերթին ներառված է «18000000» թվային ծածկագրով բաժնում («հագուստ, կոշկեղեն, ուղեբեռի հետ կապված առարկաներ և պարագաներ»):

Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ ընթացակարգի իմաստով մի շարք չափաբաժինների՝ թիվ 9 (Ներքնաշոր), 11 (Կիսակոմբինեզոն), 13 (Կոմբինիզոն հատուկ), 14 (Կոմբինեզոն), 15 (Կիսախալաթ), 16 (Կոշիկ լավսանե), 17 (Կոշկագուլպա (бахил)), 19 (Ձեռնոց ռետինե), 26 (Շնչադիմակ P2-Y), 27 (Շնչադիմակ (респиратор)), 28 (Շնչադիմակ (респиратор)) մասով նմանատիպ են համարվում ***մասնագիտական*** հագուստի, վերնահագուստի, հատուկ արտահագուստի և վերնահագուստի և պարագաների, անձնական խնամքի պարագաների, կոշկեղենի, անհատական և օժանդակ սարքերի մատակարարված լինելը:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ մասնագիտական հագուստն ըստ գնումների միասնական անվանացանկի մտնում է «18000000» թվային ծածկագրով բաժնի «**18**100000» թվային ծածկագրով խմբի մեջ:

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի հրավերի համաձայն՝ թիվ 9 չափաբաժինը (Ներքնաշոր) նախատեսված է «**183**11210», 15 (Կիսախալաթ)՝ «**351**11320», 16 (Կոշիկ լավսանե), 17 (Կոշկագուլպա (бахил))՝ համապատասխանաբար «**188**11200», «**188**11260», 19 (Ձեռնոց ռետինե)՝ «**184**21140», 26 (Շնչադիմակ P2-Y), 27 (Շնչադիմակ (респиратор)), 28 (Շնչադիմակ (респиратор))՝ «**181**41300» թվային ծածկագրերի տակ:

Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար որպես նմանատիպ պայմանագրեր ներկայացրել են «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 28.04.2017թ. կնքված ***հանդերձանքի*** մատակարարման պայմանագիրը և «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև 27.08.2015թ. կնքված ***կոշիկի*** մատակարարման ՀԿ-ՊՀ 393/15 պայմանագիրը:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 28.04.2017թ. կնքված հանդերձանքի մատակարարման պայմանագրի համաձայն՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է «կոստյում» և «թիկնոց» ապրանքատեսակները, որոնք համաձայն գնումների միասնական անվանացանկի ներառված են «18200000» թվային

ծածկագրով խմբի մեջ: «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև 27.08.2015թ. կնքված ՀԿՕ-ՊՀ 393/15 պայմանագրի համաձայն՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է կոշիկ, որը գնումների միասնական անվանացանկի համաձայն, ներառված է «**188**00000» թվային ծածկագրով խմբի մեջ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), ***եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության <u>նույն խմբերում:</u>*** Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, ինչպես նաև հաշվի առնելով վերոգրյալ վերլուծությունը, գտնում եմ, որ առկա է հակասություն հրավերով նախատեսված դրույթների միջև, քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն գործարքների համանմանությունը որոշվում է հաշվի առնելով հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության ***<u>նույն խմբերում</u>*** դասվելու հանգամանքը, իսկ տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով ի սկզբանե գնումների միասնական անվանացանկի տարբեր խնբերում ներառված գնման առարկաների, այդ թվում նաև 13-րդ չափաբաժնի համար որպես նմանատիպ (համանման) պահանջվել են գնումների միասնական անվանացանկի տարբեր խմբերում ներառված ապրանքների մատակարարման

պայմանագրեր: Դրա հետ մեկտեղ 13-րդ չափաբաժնով նախատեսվել է ձեռքբերել «Կոմբինիզոն հատուկ» ապրանքը, որն ի սկզբանե գնման պլանով և հրավերով ներառվել էր «**18**200000» թվային ծածկագրով խմբի մեջ, մինչդեռ որպես նմանատիպ պայմանագրեր հրավերով պահանջվել են այլ՝ «**18**100000» և «**188**00000» թվային ծածկագրերով խմբերի մեջ մտնող ապրանքների մատակարարման պայմանագրերը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի բողոքը, գտնում եմ, որ այն վերաբերում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին, մասնավորապես Ընկերությունը պնդում է, որ 13-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան, հաշվի առնելով վերջինիս բնույթը, ի սկզբանե պետք է ներառված լիներ ոչ թե «**18**200000» թվային ծածկագրով խմբի մեջ, այլ «**18**100000»՝ «մասնագիտական հագուստ» խմբի մեջ, ուստի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որպես նմանատիպ ներկայացված պայմանագրերը, որոնք վերաբերում են ոչ մասնագիտական հագուստի և կոշիկի մատակարարմանը, չեն կարող դիտարկվել որպես համանման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ ***հրավերի պահանջները,*** ապա ***բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:***

Այսպիսով, արձանագրում եմ, որ «Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ն ըստ էության բողոքարկում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջները, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, Ընկերության կողմից բողոքը կարող էր ներկայացվել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրացել է, իսկ ներկայացված հայտերը բացվել են, ուստի Ընկերության բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մեյդ Թու Մեյք» ՍՊԸ-ի կողմից 17.08.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**